

ԳԵՂԱՍՏ

աշխարհ

Քաղաքական, հասարակական, մշակութային թերթ 15 հունվարի 2026թ. թիվ 1 (630)

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ ԿԱՐԵՆ ՄԱՐԳՍՅԱՆԻ ԸՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՈՒՂԵՐՉՆ ԱՄԱՆՈՐԻ ԵՎ ՍՈՒՐԲ ԾՆՆԳՅԱՆ ՏՈՆԵՐԻ ԱՌԹԻՎ



Սիրելի՛ հայրենակիցներ, Անցնող տարին եւս մեկ անգամ ցույց տվեց, որ խաղաղության օրակարգի ձեւավորած հնարավորությունները կարող են վերածվել իրական արդյունքների, երբ դրանք ուղեկցվում են հետեւողական աշխատանքով, հստակ ծրագրերով եւ պատասխանատու մոտեցմամբ: Հենց այդ պայմաններում Գեղարքունիքի մարզում իրականացված մախաձեռնությունները հնարավորություն տվեցին ոչ միայն պահպանել զարգացման տեմպը, այլեւ բազմապատկել արձանագրված ձեռքբերումները:

2025 թվականը մեր մարզի համար նշանավորվեց համայնքների զարգացմանը, սոցիալական պայմանների բարելավմանը եւ ենթակառուցվածքների արդիականացմանը միտված բազմաբնույթ ծրագրերով: Տարվա ընթացքում իրականացվեցին թե՛ ընթացիկ, թե՛ երկարաժամկետ ծրագրեր, որոնք նպաստեցին մարզի համաշափ զարգացմանը եւ բնակչության կյանքի որակի բարձրացմանը:

Կրթության եւ նախադպրոցական ոլորտը շարունակեց մնալ մեր առաջնահերթություններից մեկը: Տարվա ընթացքում մարզի տասնյակ դպրոցներում իրականացվեցին շինարարական, վերանորոգման եւ արդիականացման աշխատանքներ, կառուցվեցին եւ շահագործման հանձնվեցին նոր ուսումնական հաստատություններ, ստեղծվեցին ժամանակակից լաբորատոր եւ մարզական պայմաններ: Նախադպրոցական ոլորտում եւս կառուցվեցին նոր մանկապարտեզներ՝ ապահովելով փոքրիկների համար անվտանգ եւ որակյալ կրթական միջավայր:

Առողջապահության ոլորտում քայլեր ձեռնարկվեցին առաջնային բուժօգնության համակարգի բարելավման ուղղությամբ: Վերանորոգվեցին եւ արդիականացվեցին բուժամբուլատորիաներ, բժշկական կենտրոնները համալրվեցին ժամանակակից սարքավորումներով, իսկ առաջիկա տարվա համար արդեն ծրագրավորված են նոր վերանորոգումներ ու վերազինումներ:

Մարզում իրականացվեցին լայնածավալ շինարարական եւ վերանորոգման աշխատանքներ. ասֆալտապատվեցին եւ սալիկապատվեցին փողոցներ ու մայրեր, վերանորոգվեցին բազմաբնակարան շենքերի մուտքեր եւ տանիքներ, կառուցվեցին խմելու ջրի, արտաքին լուսավորության եւ գազատարի նոր ցանցեր: Միաժամանակ վերակառուցվեցին մշակութային, վարչական եւ համայնքային նշանակության շենքեր՝ ապահովելով առավել հարմար եւ անվտանգ միջավայր:

Գյուղատնտեսության զարգացման եւ ոռոգման համակարգերի բարելավման արդյունքում ընդլայնվեց ոռոգվող հողատարածքների ծավալը, խթանվեց գյուղական տնտեսությունների տնտեսական ակտիվությունը, եւ ստեղծվեցին նոր աշխատատեղեր:

2025 թվականին շարունակվեցին նաեւ Սեւանա լճի պահպանության, շրջակա միջավայրի պաշտպանության եւ ջրային համակարգերի սպասարկման աշխատանքները: Մաքրվեցին գետերի հուններ ու սելավատարներ, իրականացվեցին լճի ափամերձ տարածքների բարեկարգման ծրագրեր, կարելի էր քայլեր ձեռնարկվեցին էկոհամակարգի վերականգնման ուղղությամբ:

Երիտասարդության, սպորտի եւ մշակույթի ոլորտներում արձանագրվեց նկատելի ակտիվություն: Կառուցվեցին մարզադահլիճներ, մեր մարզիկները բարձր արդյունքներ գրանցեցին հանրապետական եւ միջազգային մրցաշարերում, իսկ մշակութային կյանքը դարձավ ավելի աշխույժ եւ ներգրավող:

Տարվա ընթացքում մեծ ուշադրություն դարձվեց նաեւ համայնքների տեխնիկական հագեցմանը եւ ծառայությունների արդյունավետ կազմակերպմանը՝ նոր տեխնիկայի, աղբահանության եւ թափոնների տեսակավորման համակարգերի ներդրմամբ:

Ամփոփելով անցնող տարին՝ կարող ենք վստահաբար ասել, որ 2025 թվականը Գեղարքունիքի մարզում դարձավ իրականացված աշխատանքների հստակ արդյունքների տարի: Յուրաքանչյուր ծրագիր ուղղված էր մարզկանց առօրյա իրական փոփոխությանը եւ մարզի կայուն զարգացմանը:

Ամանորի այս խորհրդանշական պահին ցանկանում եմ շնորհակալություն հայտնել բոլոր նրանց, ովքեր իրենց աշխատանքով, նվիրվածությամբ եւ պատասխանատվությամբ նպաստել են մեր մարզի զարգացմանը:

Շնորհավորում եմ ձեզ գալիք Նոր տարվա եւ Սուրբ Ծննդյան տոների առթիվ՝ մաղթելով խաղաղություն, առողջություն, բարեկեցություն եւ նոր հաջողություններ մեր համայնքներին ու յուրաքանչյուր ընտանիքի:

Թող գալիք տարին լինի շարունակական առաջընթացի, համախմբված աշխատանքի եւ նոր ձեռքբերումների տարի:

ՆՈՐՈՎ ՈՒ ՀԶՈՐ ՀԱՅՐԵՆԻՔԻ ԿԵՐՏՄԱՆ ԱԿՆԿԱԼԻՔՈՎ

Պատմության գիրկն անցավ նաեւ 2025 թվականը, ու ապրողներս հերթական Ամանորը դիմավորում ենք խաղաղ, նորոգ ու հզոր հայրենիք կերտելու ակնալիքով:

Անցնող տարին թեւ չափազանց աղետաբեր, անհանգիստ ու սպառնալից եղավ աշխարհի շատ երկրների համար, սակայն, բարեբախտաբար, Հայաստանի համար այն եղավ լիակատար խաղաղության ու անսխաղեպ հայրենաշինության, հսկայական ձեռքբերումների տարի, որից անմասն չմնաց նաեւ Գեղարքունիքի մարզը:

Բավական է ասել, որ Գեղարքունիքի մարզում 2025 թվականին գործել է ավելի քան 300 շինարարական ընդգրկելով գրեթե բոլոր բնակավայրերը: Եթե խոսենք թվերի լեզվով, ապա մի քանի տասնյակ միլիարդավոր դրամների կապիտալ ներդրումների արդյունքում կառուցվել, հիմնանորոգվել կամ միջին նորոգման է ենթարկվել 128 կիլոմետր երկաթուղային ճանապարհ, 84 կիլոմետր 69 մետր խմելու, 50 կիլոմետր 25 մետր ոռոգման ջրատարներ, 50 կիլոմետր 768 մետր լուսավորության ցանց, 4 կիլոմետր 954 մետր գազատար: Կառուցման, հիմնանորոգման կամ վերանորոգման ու վերազինման աշխատանքներ են ընթացել մարզի 63 դպրոցներում ու 11 մանկապարտեզներում, շահագործման են հանձնվել արդի չափորոշիչների համապատասխանող Ջիլի միջնակարգ, Սեւանի երաժշտական դպրոցները, Երանոսի, Ծովասարի, Աստղածորի, Վարդենիկի, Վարդենիսի Բանական թաղամասի, Սարուխանի թիվ 1, Գամբարակի թիվ 2 մանկապարտեզները, Ծակքարի մշակույթի տունը, այլ

կրեւորագույն կառույցներ: Այո, հայրենաշինական մեծ թափն, իրոք, աննախադեպ է մեզանում, ու հուսադրողն ու ուրախալին այն է, որ սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության այդ ծրագրերի իրականացմամբ կարգավորվել են այնպիսի հիմնախնդիրներ, որոնց լուծմանը մարդիկ սպասել են տասնամյակներով, դեռեւս ԽՄԴՄ տարիներից:

Մեր քաղաքացիներն աստիճանաբար ապահովվում են բարեկարգ փողոցներով ու մայրերով, գիշերային լուսավորության ցանցով, արդի չափորոշիչներին համապատասխան կրթական, նախակրթական ու մշակութային հաստատություններով, խմելու եւ ոռոգման ջրով, այլ կենսապայմաններով:

Կատարված հսկայածավալ ներդրումների հաշվին ստեղծվել են հազարավոր աշխատատեղեր, ավելացել են մեր քաղաքացիների եկամուտները, բարձրացել է կյանքի որակը:

Եվ արդեն իրականություն դարձած աննախադեպ այս հայրենաշինությունը պարզապես չի կարող վստահություն չներշնչել առ այն, որ 2026 թվականին եւս ահռելի ու անխոչընդոտ կլինեն մեր նոր ձեռքբերումները կենսագործունեության տարբեր ոլորտներում, որ մենք այսպես քայլ առ քայլ կհաղթահարենք անցյալից մնացած դժվարություններն ու տարածանյութություններն ու կհասնենք նորոգ ու հզոր հայրենիք կերտելու մեր բաղձալի նպատակներին:

Ուրախ Ամանոր բոլորիս, անսպառ եռանդ գալիք 2026 թվականին:
Խոսքով Խղաթյան

ԳՎԱԼՈՒ ՍՈՒՐԲ ԱՍՏՎԱԾԱԾԻՆ ԵԿԵՂԵՑՈՒՄ ՄԱՍՈՒԳՎԵՅԻՆ ՍՈՒՐԲ ԾՆՆԻՑԱՆ ԶՐԱԳԱԼՈՒՅՅԻ ԵՒ ԱՍՏՎԱԾԱՀԱՅՏՆՈՒԹՅԱՆ ՊԱՏԱՐԱԳՆԵՐ

Հունվարի 5-ի երեկոյան Գավառի առաջնորդանիստ Սուրբ Աստվածածին եկեղեցում մատուցվեց Սուրբ Ծննդյան Երազալույցի պատարագ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Գերաշնորհ Տեր Պարթև Եպիսկոպոս Բարսեղյանի հանդիսապետությամբ եւ Գեղարքունյաց թեմի հոգեւոր դասի մասնակցությամբ:



Օրվա պատարագիչն էր Գեղարքունյաց թեմի փոխառաջնորդ Տեր Բարբեն վարդապետ Սալբիյանը:

Արարողությանը ներկա էին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ղեկավար կազմը, ստորաբաժանումների ղեկավարները եւ աշխատակիցներ, Գավառ համայնքի ղեկավարի տեղակալները, կրթամշակութային, առողջապահական հաստատությունների ներկայացուցիչներ, այլ հավատավորներ:

Պատարագի ավարտին թեմի առաջնորդի կողմից տոնական Ավետիսը հայտնվեց հավատացյալներին եւ նրանց փոխանցվեց Սուրբ Խորանից իջեցված ճրագի լույսը:

Հունվարի 6-ին Գավառի առաջնորդանիստ Սուրբ Աստվածածին եկեղեցում Սուրբ Ծննդյան եւ Աստվածահայտնության տոնի առթիվ մատուցվեց Սուրբ Պատարագ՝ հանդիսապետությամբ Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթև Եպիսկոպոս Բարսեղյանի:

Սիրբզան Պատարագը մատուցվեց ձեռամբ Գավառի հոգեւոր հովիվ Տեր Նշան քահանա Սարգսյանի:

Պատարագի ավարտին կատարվեց Զրոհնյաց կարգ, եւ օրհնված ջուրը բաժանվեց ներկա հավատացյալներին:

Զրոհների ավարտին Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տեր Պարթև Եպիսկոպոս Բարսեղյանը շնորհավորեց ներկա հավատացյալներին եւ վերստին Սուրբ Ծննդյան ավետիսը բերեց՝ մաղթելով, որ օրհնված ջուրը հոգեւոր ու մարմնավոր բժշկություն պարգեւի ամենքին, մաքրությամբ, սիրով եւ խաղաղությամբ լցնի նրանց հարկերը, եւ մանուկ Հիսուսի Ծննդյան ավետիսը բարձր ու անսասան պահի հայրենի մեր երկիրը:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԽՈՐՀՐԴԻ ՏԱՐԵՎԵՐՁՅԱՆ ՆԻՍՏԵ ԱՆՑԱՎ ՀԱԳԵՑԱԾ ՕՐԱԿԱՐԳՈՎ

Դեկտեմբերի 30-ին կայացավ Գեղարքունիքի մարզի խորհրդի տարեկերտյան նիստը, որը վարեց Գեղարքունիքի մարզպետ, մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը: Նիստին մասնակցեցին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ստորաբաժանումների ղեկավարներ, կրթական եւ առողջապահական հաստատությունների տնօրեններ ու մարզի ուժային կառույցների եւ համայնքների բնակավայրերի վարչական ղեկավարներ:



Մարզխորհրդի նիստում քննարկվեց 8 հարց, որոնց շուրջ գեկուցումներով հանդես եկան Գավառի պետական համալսարանի ռեկտոր Ռուզաննա Յակոբյանը, Գավառ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Գրիգոր Դաշտոյանը, Մարտունի համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Շահինյանը, Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը, Սեւան համայնքի ղեկավարի տեղակալ Սուրեն Համբարձումյանը, Ճամբարակ համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռոբերտ Օհանյանը, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանը եւ քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության պետ Սասուն Սահակյանը:

Ձեկուցողները ներկայացրին Գավառի պետական համալսարանում մագիստրոսական նոր կրթական ծրագրի եւ համալսարանի իրականացրած միջազգային ակադեմիական ծրագրերի, Գավառ, Մարտունի, Սեւան, Վարդենիս, Ճամբարակ համայնքներում իրականացված տարեկան աշխատանքային հաշվետվության, 2025 թվականի ղեկտեմբերի վերջի դրությամբ համայնքների սեփական եկամուտների հավաքագրման գործընթացի եւ ՀՀ պետական բյուջեից ՀՀ Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմին հատկացված միջոցների, Գեղարքունիք մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչության կողմից 2025 թվականի ընթացքում կատարված աշխատանքների հետ կապված հարցերը:

Նիստի աշխատանքներն ամփոփեց Գեղարքունիքի մարզպետ, մարզի խորհրդի նախագահ Կարեն Սարգսյանը: Նա նշեց, որ 2025 թվականի ղեկտեմբերի 29-ի

արդյունքներով մարզի համայնքների սեփական եկամուտների հավաքագրման ցուցանիշը կազմում է 106 տոկոս, կամ պլանավորված 3 միլիարդ 797 միլիոն 837 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 4 միլիարդ 12 միլիոն 25,8 հազար դրամ: ՀՀ պետական բյուջեից Գեղարքունիքի մարզին 37 ծրագրերով հատկացվել է 21 միլիարդ 220 միլիոն 771,2 հազար դրամ, որից 2025 թվականի ղեկտեմբերի վերջի դրությամբ փաստացի ծախսվել է 20 միլիարդ 912 միլիոն 664,4 հազար դրամ, կամ կատարողականը կազմում է 98,5 տոկոս:

ՀՀ պետական բյուջեից համայնքներին տրվող ֆինանսական համահարթեցման դոտացիաների վճարումը ամբողջությամբ կատարվել է: 2025 թվականին հատկացված ֆինանսական համահարթեցման դոտացիան 2024 թվականի նկատմամբ աճել է 1 միլիարդ 400 միլիոն 287 հազար դրամով, որը կազմում է համայնքների սեփական եկամուտների 37 տոկոսը: Ընդհանուր առմամբ, մարզում սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում 2025 թվականի ընթացքում կառուցվել է 84.069 գծամետր խմելու ջրագիծ, 50.025 գծամետր ոռոգման ցանց, 50.768 գծամետր լուսավորության ցանց եւ 4954 գծամետր գազատար:

Ասֆալտապատվել եւ սալիկապատվել է 65.200 գծամետր համայնքային նշանակության փողոցներ ու մայրեր, այդ թվում 9079 քառակուսի մետր մակերես զբաղեցնող շենքերի բակեր, սալարկվել է 6958 քմ համայնքային նշանակության փողոցներ եւ մայ-

թեր: Հիմնանորոգվել են 8 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ՝ 5581 քմ ընդհանուր մակերեսով, կառուցվել է մեկ մանկապարտեզ /90 սան հզորությամբ/, Գավառ քաղաքում շատրվանային համակարգ, ինչպես նաեւ Ծակքար բնակավայրում կառուցվել է հանդիսության սրահը, վերանորոգվել է մշակութային կենտրոնը եւ ճամբարակի համայնքապետարանի վարչական շենքը: Ընդհանուր առմամբ, տարբեր ծրագրերով, կառուցվել կամ հիմնանորոգվել է 128 կիլոմետր ճանապարհ: 2025 թվականի ընթացքում մշակութային կենտրոնների, համայնքային նշանակության շենքերի եւ մանկապարտեզների համար ձեռք է բերվել անհրաժեշտ գույք: 2025 թվականի ընթացքում տարբեր գերատեսչությունների կողմից մասնավորապես՝ Քաղաքաշինության կոմիտեի, տարածքային զարգացման հիմնադրամի, «Հայաստան Համահայկական հիմնադրամի» պատվիրատվությամբ ՀՀ Գեղարքունիքի մարզում իրականացվել է իրականացվում են դարձրեցնել, մանկապարտեզների, բուժամբուլատորիաների կառուցման եւ վերանորոգման աշխատանքներ: Հրատապ եւ անհետաձգելի համարվող ծրագրի շրջանակներում մարզում 2025 թվականին իրականացվել են թվով 4 ծրագրեր, որոնց արդյունքում Գավառ քաղաքի Հացառատ քաղամասում կառուցվել է 800 գծամետր նոր կոյուղագիծ, վերակառուցվել է 2 բազմաբնակարան բնակելի շենքի տանիք եւ խաչադրուր բնակավայրի կամուրջը, ինչպես նաեւ ճամբարակ քաղաքում վերականգնվել է շուրջ 260 գծամետր երկարությամբ հեռապատը: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 200 միլիոն դրամ:

Այս անմասխաղեպ, գոհացուցիչ արդյունքներին մենք հասել ենք հետեւողական ու համագործակցված աշխատանքի շնորհիվ՝ հիմնականում լուծելով տարեսկզբին մեր առջեւ դրված խնդիրները, ինչի համար եւ ուզում են շնորհակալություն հայտնել բոլորիդ: Եկող տարում եւս մեզ սպասում է բավականին լարված, պատասխանատու, հավակնոտ ծրագրերով լի աշխատանքային տարի, ուստի բոլորս պետք է բազմապատկենք մեր եռանդն ու ջանքերը՝ մեր առջեւ դրված խնդիրներ կատարելու ու արդեն ձեռնարկված հայրենաշինությունն առաջ մղելու համար: Շնորհավորում են բոլորիդ Ամանորի եւ Սուրբ Ծննդյան տոների կապակցությամբ, մաղթում քաջամուղջություն, խաղաղ հայրենիք, երջանկություն ու ձեռքբերումներ աշխատանքում ու անձնական կյանքում, նիստը եզրափակեց մարզպետ Կարեն Սարգսյանը:

«Գեղամա աշխարհ»

ՎԱՐԴԵՆԻՍ ՀԱՄԱՅՆՔԸ ՀԱՄԱԼՐՎԵԼ Է ԵՎՍ ՄԵԿ ԳՅՈՒՂԱՏԵՏԵՍԱԿԱՆ ՏԵԽՆԻԿԱՑՈՎ

Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքը համարվել է եւս մեկ գյուղատնտեսական տեխնիկայով անիվավոր միջի տրակտորով:

Ինչպես տեղեկացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից, տեղահանության ազդակիր համայնքներում 2024 թվականի հոկտեմբերից մեկնարկել է «Խոցելի համայնքներում կենսապահովման եւ տնտեսական կենսունակության խթանում» ծրագիրը Միջին Արեւելքում եւ ԱՊՀ-ում, որը ֆինանսավորվում է Կորեայի միջազգային համագործակցության գործակալության կողմից եւ իրականացվում է Լիբանանում եւ Հայաստանում Միգրացիայի միջազգային կազմակերպության կողմից:



ների եւ այլ խոցելի խմբերի համար՝ միաժամանակ ուժեղացնելով տեղական տնտեսական ենթակառուցվածքները եւ կառուցել եկամուտներ ստեղծելու կարողություններ հակամարտությունների նկատմամբ գայուն մոտեցմամբ:

Մեր երախտագիտությունն ենք հայտնում Գեղարքունիքի մարզպետ Կարեն Սարգսյանին եւ «Միգրացիայի միջազգային կազմակերպության» Հայաստանյան գրասենյակի ղեկավար տիկին Իլոնա Տեր-Մինասյանին՝ կենսական կարելուր նշանակության այս ծրագիրը Վարդենիս համայնքում կյանքի կոչելու համար: Նոր տեխնիկան մեծապես կօգնի տեղահանված ու մեր համայնքում ապաստանած տնտեսություններին՝ գյուղատնտեսական աշխատանքներն արդյունավետ իրականացնելու համար, ներկայացրին Վարդենիսի համայնքապետարանի աշխատակազմից:

«Գեղամա աշխարհ»

ԳԱՉԱՖԻԿԱՅՎՈՒՄ ԵՆ ԳԱՎԱՌ ԲՆԱԿԱՐԻ ԵՎ ԳԱՆՁԱԿ ԳՅՈՒՂԻ ԱՌԱՆՁԻՆ ՓՈՂՈՑՆԵՐԻ ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ

Գավառի համայնքապետարանի նախաձեռնությամբ եւ ֆինանսավորմամբ քաղաքի Ազատության 7, 9, 11, ինչպես նաեւ Գանձակ բնակավայրի Պետրոսյան, Աղայան, Սունդուկյան, Մեծաբեկ, Հաղթանակ եւ Բատիկյան փողոցներում միջին եւ ցածր ճնշման գազատար է կառուցվում:

ավարտվել են, իսկ Գանձակում դրանք դեռեւս ընթացքի մեջ են: Գավառ քաղաքում ընդհանուր 861 մետր հատվածում պողպատյա հենարանների վրա կառուցվել է վերգետնյա գազատար: Այս շինարարության համար համայնքային բյուջեից 15 միլիոն 800 հազար դրամ է հատկացվել: 23 միլիոն 800 հազար դրամ էլ կարծես Գանձակի 1400 մետր երկարության գազատարի շինարարությունը:



Գազատարերի շինարարության ծրագրում ընդգրկված տարածքները երբեւէ գազի ֆիկացված չեն եղել: Այժմ այս քաղաքացիների բնակիչները եւս կարող են օգտվել կապույտ վառելիքից: ԳԳՄ Գավառի մասնաճյուղի փոխտնօրենը տեղեկացնում է, որ գազատարների շինարարության ամբողջական ավարտը նախատեսված է այս տարեվերջին:

Ավարդ Մանուկյան

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ՄԵԿԱՐԿԵԼ Է 2026 ԹՎԱԿԱՆԻ ՁՄԵՌԱՑԻՆ ԶՈՐԱԿՈՋԸ

Հունվարի 8-ից Գեղարքունիքի մարզի Մարտունի եւ Վարդենիս համայնքներում մեկնարկել է 2026 թվականի ձմեռային գորակոչը:

Նորակոչիկները ՀՀ պաշտպանության նախարարության Գեղարքունիքի մարզային զինվորական կոմիսարիատներից ճանապարհվել են զինվորական ծառայության:

Մարտունի համայնքում ծառայության մեկնող նորակոչիկներին շնորհավորանքի եւ բարեմաղթանքի խոսքեր են ուղղել Գեղարքունիքի մարզպետի խորհրդական Սեւակ Խլղաթյանը, Մարտունի համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Վահագն Դավթյանը, ինչպես նաեւ ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզային զինվորական կոմիսարի տեղակալ, փոխգնդապետ Կամո Մանուկյանը: Նորակոչիկները ստացել են նաեւ Հայ Առաքելական եկեղեցու Գեղարքունյաց թեմի Մարտունու տարածաշրջանի հոգեւոր հովիվ Տեր Երեմիա քահանա Սարգսյանի օրհնությունը:

տի տեղակալ Վահան Զարոյանը, Վարդենիս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Կարեն Մկրտչյանը, համայնքի ղեկավարի խորհրդական Խաժակ Մկրտչյանը, ինչպես նաեւ ՀՀ ՊՆ Գեղարքունիքի մարզային զինվորական կոմիսարիատի Կամսար Հարությունյանը: Առաջիկա օրերին 2026 թվականի ձմեռային գորակոչը կմեկնարկի նաեւ Գավառ, Սեւան եւ ճամբարակ համայնքներում:

«Գեղամա աշխարհ»



2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀՀ ՊԵՏԱԿԱՆ ԲՅՈՒՋԵԻՑ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻՆ 37 ԾՐԱԳՐԵՐՈՎ ՀԱՏԿԱԳՎԵԼ Է 21 ՄԻԼԻԱՐԴ 220 ՄԻԼԻՈՆ 771, 2 ՀԱՉԱՐ ԴՐԱՄ

2025 թվականին ՀՀ պետական բյուջեից Գեղարքունիքի մարզին 37 ծրագրերով հատկացվել է 21 միլիարդ 220 միլիոն 771, 2 հազար դրամ, որից 2025 թվականի դեկտեմբերի 26-ի դրությամբ փաստացի ծախսվել է 20 միլիարդ 912 միլիոն 664,4 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 98,5 տոկոս:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանը, «Պետական աջակցություն սահմանամերձ համայնքներին» ծրագրով մարզին հատկացվել է 127 միլիոն դրամ, որից փաստացի ծախսվել է 123,2 միլիոն դրամ: «ՀՀ մարզերին սուբվենցիաների տրամադրում ենթակառուցվածքների զարգացման նպատակով» ծրագրով մարզին հատկացվել է 7 միլիարդ 289 միլիոն 71,9 հազար դրամ, որից փաստացի ֆինանսավորվել է 7 միլիարդ 222 միլիոն 708,8 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 99,1 տոկոս:

«Առաջնահերթ անհետաձգելի ծրագրերի» իրականացման համար հատկացվել է 56 միլիոն 452,8 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 44 միլիոն 830,2 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 79,4 տոկոս:

«Առաջնահերթ լուծում պահանջող ծրագրով»



հատկացվել է 143 միլիոն 106,6 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 140 միլիոն 521,8 հազար դրամ, կամ կատարողականը կազմել է 98,2 տոկոս:

«Հանրակրթական 3 մակարդակների ծրագրերով» հատկացվել է 10 միլիարդ 344 միլիոն 638,9 հազար դրամ, որն ամբողջությամբ ծախսվել է: «Ուսուցիչների կամավոր առեստավորում» ծրագրով նախատեսված 616 միլիոն 930 հազար դրամի դիմաց փաստացի վճարվել է 616 միլիոն 750,6 հազար դրամ: Հանրակրթական ուսումնական հաստատություններում նախադպրոցական

կրթություն իրականացնելու համար հատկացվել է 186 միլիոն 411 հազար դրամ:

«Համայնքներում սոցիալական խմբի 1-5 տարեկան երեխաների նախադպրոցական կրթության ապահովում» ծրագրով նախատեսված 177 միլիոն 942,6 հազար դրամից փաստացի ծախսվել է 82 միլիոն 339, 4 հազար դրամ:

«Պետական հիմնարկների աշխատողներին սոցիալական փաթեթից օգտվողներին հատուցում» ծրագրով նախատեսվել է 321 միլիոն 624 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 306 միլիոն 452,1 հազար դրամ:

«Կրթական օբյեկտների շենքային պայմանների բարելավում, հիմնանորոգում» ծրագրով նախատեսված 285 միլիոն 102,2 հազար դրամն ամբողջությամբ ծախսվել է:

Մարզային նշանակության ավտոճանապարհների պահպանման, անվտանգ երթևեկության ծառայություններ իրականացնելու համար մարզին նախատեսվել է 310 միլիոն 696,8 հազար դրամ, որից փաստացի ծախսվել է 217 միլիոն 864,2 հազար դրամ:

«2024 եւ 2025 թվականներին տեղացած կարկուտի հետեւանքով հողօգտագործողներին պատճառված վնասների մասնակի փոխհատուցում» ծրագրով մարզին հատկացվել է 67 միլիոն 289 հազար դրամ, որն ամբողջությամբ տրամադրվել է համայնքներին:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ՀԱՄԱՅՆՔՆԵՐԻ ԲՅՈՒՋԵՆԵՐԻ ՍԵՓԱԿԱՆ ԵԿԱՄՈՒՏՆԵՐԸ 2025 ԹՎԱԿԱՆԻՆ ՀԱՎԱՔԱԳՎԵԼ ԵՆ 105,6 ՏՈՒՍՈՒՎ

Գեղարքունիքի մարզի համայնքների բյուջեների սեփական եկամուտները 2025 թվականին հավաքագրվել են 109,3 տոկոսով:

Ինչպես տեղեկացրեց Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի ֆինանսական վարչության պետ Յուրա Մուշեղյանը, 2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ պլանավորված 3 միլիարդ 797 միլիոն 837 հազար դրամի դիմաց փաստացի հավաքագրվել է 4 միլիարդ 150 միլիոն դրամ:

Վարդենիս համայնքը սեփական եկամուտները կատարել է 114, 8, Գավառ



համայնքը` 99,1, Գամբարակ համայնքը` 112,7, Մարտունի համայնքը` 112,5, Սեւան համայնքը` 110,9 տոկոսով:

2025 թվականին պետության կողմից Գեղարքունիքի մարզի համայնքներին հատկացված ֆինանսական համահարթեցման դրուցիան 2024 թվականի նկատմամբ աճել է 1 միլիարդ 400 միլիոն 287 հազար դրամով, որը կազմում է սեփական եկամուտների 37 տոկոսը: Այն 2025 թվականին ամբողջությամբ վճարվել է:

«Գեղամա աշխարհ»

ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՎԵՐՋԻՆ ՕՐԿԱ ԴՐՈՒԹՅԱՄԲ ԱՄԲՈՂՁՈՒԹՅԱՄԲ ԱՎԱՐՏՎԵԼ Է ՍՈՒԲՎԵՆՑԻՈՆ 156 ԵՆԹԱԾՐԱԳԻՐ

Գեղարքունիքի մարզում 2025 թվականի վերջին օրվա դրությամբ ամբողջությամբ ավարտվել է սուբվենցիոն 156 ենթածրագիր:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, 2025 թվականին Գեղարքունիքի մարզի համայնքների կողմից ներկայացվել է 31 ծրագիր` 136 ենթածրագրով, որից Միջգերատեսչական հանձնաժողովի կողմից հաստատվել է 28 ծրագիր` 128 ենթածրագրով, եւ 2025 թվական է տեղափոխվել 2023-2024 թվականներից 94 ենթածրագիր: Այսպիսով, 222 ենթածրագրերի ընդհանուր արժեքը կազմել է 18,3 միլիարդ դրամ, որից ՀՀ կառավարության մասնաբաժինը 11,4 միլիարդ դրամ է, կամ ընդհանուր արժեքի 62,3 տոկոսը, համայնքային մասնաբաժինը` 6,9 միլիարդ դրամ, կամ 37,7 տոկոս:

2025 թվականի դեկտեմբերի 30-ի դրությամբ ամբողջությամբ ավարտվել են 156 ենթածրագրեր: 66 ենթածրագրերից 60-ի ավարտման ժամկետը պայմանագրով նախատեսված է 2026 թվականին, իսկ 6 ենթածրագրեր տարբեր պատճառներով են տեղափոխվել այս տարի:

156 ավարտված ենթածրագրերի արդյունքում ծախսվել է շուրջ 11 միլիարդ 989 միլիոն դրամ, որից ՀՀ կառավարության մասնաբաժինը 7 միլիարդ 222 միլիոն դրամ է, համայնքային մասնաբաժինը 4 միլիարդ 766 միլիոն դրամ:

Ընդհանուր առմամբ, մարզում սուբվենցիոն



ծրագրերի շրջանակներում 2025 թվականի ընթացքում կառուցվել է 84 կիլոմետր 69 մետր խմելու ջրագիծ, 50 կիլոմետր 25 մետր ոռոգման ցանց, 50 կիլոմետր 768 մետր լուսավորության ցանց եւ 4 կիլոմետր 954 մետր գազատար: Ասֆալտապատվել եւ սալիկապատվել է 65 կիլոմետր 200 մետր համայնքային նշանակության փողոցներ ու մայրեր, 9079 քառակուսի մետր մակերես զբաղեցնող բազմաբնակարան շենքերի բակեր, սալարկվել է 6958 քառակուսի մետր համայնքային նշանակության փողոցներ եւ մայրեր: Հիմնանորոգվել են 8 բազմաբնակարան բնակելի շենքերի տանիքներ` 5581 քառակուսի մետր ընդհանուր մակերեսով, կառուցվել է մեկ մանկապարտեզ` 90 սան հզորությամբ, Գավառ քաղաքում շահագործվել է շատրվանային համակարգ, ինչպես նաեւ Ծակքար բնակավայրում կառուցվել է հանդիսության սրահը, վերանորոգվել է մշակութային կենտրոնը եւ Գամբարակի համայնքապետարանի վարչական շենքը:

2025 թվականի ընթացքում մշակութային կենտրոնների, համայնքային նշանակության շենքերի եւ մանկապարտեզների համար ձեռք է բերվել անհրաժեշտ գույք:

ՀՀ Գեղարքունիքի մարզպետի հանձնարարությամբ շուրջ 450 մշտադիտարման այցեր են իրականացվել մարզում այլ գերատեսչությունների եւ սուբվենցիոն ծրագրերի շրջանակներում իրականացվող շինարարական օբյեկտներում: Ուումնասիրությունների արդյունքում 39 օբյեկտում արձանագրվել են թերություններ, որոնց գերակշիռ մասը կապալառու կազմակերպությունների կողմից շտկվել է, իսկ մնացածը գտնվում է շտկման փուլում:

«Գեղամա աշխարհ»

2025 ԹՎԱԿԱՆԻՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶԻ ԲՈՒԺ-ՇՒՄԱՐԿՆԵՐՈՒՄ ԳՐԱՆՑՎԵԼ Է 1364 ԾՆՈՒՆԻ

2025 թվականին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժօժանդներում գրանցվել է 1364 ծնունդ` 733 տղա եւ 631 աղջիկ:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժօժանդներից, 657 ծնունդ գրանցվել է Մարտունու ծննդատանը, 291 ծնունդ` Սեւանի, 252 ծնունդ` Գավառի, 143 ծնունդ` Վարդենիսի բժշկական կենտրոններում, 22 ծնունդ` Գամբարակի առողջության կենտրոնում:

2025 թվականի դեկտեմբեր ամսին Գեղարքունիքի մարզի բուժօժանդներում ծնվել է 135 երեխա` 70 տղա, 65 աղջիկ: 62 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 28 երեխա` Սեւանի, 24 երեխա` Գավառի, 19 երեխա` Վարդենիսի բժշկական կենտրոններում,

2 երեխա` Գամբարակի առողջության կենտրոնում:

2024 թվականին Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժօժանդներում ծնվել է 1486 երեխա` 845 տղա եւ 641 աղջիկ: Իսկ անցած դեկտեմբերին գրանցվել է 133 ծնունդ:

Գեղարքունիքի մարզի ծննդօգնություն իրականացնող բուժօժանդներում 2026 թվականի առաջին վեց օրերին լույս աշխարհ են եկել 21 երեխա` 14 տղա եւ 7 աղջիկ: 12 երեխա ծնվել է Մարտունու ծննդատանը, 5 երեխա` Սեւանի, 2-ական երեխա` Գավառի եւ Վարդենիսի բժշկական կենտրոններում: Գամբարակի առողջության կենտրոնում այս տարվա առաջին վեց օրերի ընթացքում ծնունդ չի գրանցվել:

«Գեղամա աշխարհ»

ՍԵՎԱՆԻ ԼՃԻ ՄԱԿԱՐԻՎԵՐ ԵՎ ԽՈՐԻ ՏԱՐՎԱԿԱՆ ԶՈՒՆՎԱՐԻ ՄԿՋՔԻ ՀԱՄԵՄՆՏ ՆՎԱՋԵԼ Է 16 ՄԱՆՏԻՄԵՏՐՈՎ

2026 թվականի հունվարի 8-ի դրությամբ Սեւան լիճը ծովի մակերեսից գտնվել է 1900 մետր 22 սանտիմետր բարձրության վրա, ինչը 16 սանտիմետրով նվազ է նախորդ տարվա նույն օրում գրանցված միջինը:

ՀՀ ՇՄՍ «Հիդրոօդերևութաբանության եւ մոնիտորինգի կենտրոն» ՊՈԱԿ տեղեկագրի տվյալների համաձայն` 2026 թվականի առաջին ութ օրերի ընթացքում Արփա-Սեւան թունելային ջրատարով Սեւան լիճ է տեղափոխվել 1 միլիոն 58 հազար խորանարդ մետր ջուր:

Սեւան լիճ թափվող գետերը գտնվում են ձմեռային սակավաջուր փուլում:

ԳԵՂԱՍՏ 4

ՄԱՐԶԻ ԲԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՈՒՈՐՏԻ ԱՅՆ ԶԵՆՔԵՐՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՅՈՒՑԱՆԻՇՆԵՐԻ ՄԱՍԻՆ

2025 թվականին Հրատապ եւ անհետաձգելի համարվող ծրագրի շրջանակներում Գեղարքունիքի մարզում իրականացվել է 4 ծրագիր:

Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, այդ ծրագրերի կատարման արդյունքում Գավառ քաղաքի Հացառատ թաղամասում կառուցվել է 800 գծամետր երկարության նոր կոյուղագիծ, վերակառուցվել է 2 բազմաբնակարան բնակելի շենքի տանիք եւ հաշաղբյուր բնակավայրի կամուրջը, ինչպես նաեւ ճամբարակ քաղաքում վերակառուցվել է շուրջ 260 գծամետր երկարությամբ հեռապատուղ: Այս ծրագրի շրջանակներում ՀՀ պետական բյուջեից հատկացվել է շուրջ 200 միլիոն դրամ:

2025 թվականի մասհանունների /ռոյալթի/ ծրագրերով ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքին է հատկացվել 84.7 միլիոն դրամ, որով համայնքի ձեռք է բերվել ավտոաշտարակ, իսկ առաջիկայում նախատեսվում է իրականացնել ոռոգման համակարգի եւ խմելու ջրի ջրագծերի կառուցում, փողոցային լուսավորության անցկացում համայնքի տարբեր բնակավայրերում:

Գեղարքունիքի մարզում 2025 թվականին «ՀՀ սահմանամերձ բնակավայրերում ընտանիքների բնակարանային մատչելիության ապահովման պետական աջակցության ծրագրի» շրջանակներում 88 ընտանիքների տրամադրվել է շինարարության թույլտվություն, որոնցից 6-ը ճամբարակ, 82-ը՝ Վարդենիս համայնքում: 88 բնակարաններից 11-ում



2026 թվականի սկզբի դրությամբ շինարարությունն ավարտված է, մնացած 66-ում շինարարական աշխատանքները գտնվում են ընթացքի մեջ, որոնք կավարտվեն 2026 թվականի ընթացքում:

Վարդենիս համայնքում անհատական բնակելի տներ կառուցվում են Սոթք, Վերին Շորժա, Ներքին Շորժա, Ազատ, Կուրթ, Նորաբակ բնակավայրերում, ճամբարակ համայնքում Վահան բնակավայրում:

Մեկ բնակարանի կառուցման համար շահառու ընտանիքին հատկացվում է 16 միլիոն դրամ:

Գեղարքունիքի մարզից 2025 թվականի ընթացքում ՀՀ քաղաքաշինության կոմիտե է ներկայացվել 122 քաղաքաշինական եւ հողաշինական գործ, որոնցից դրական եզրակացություն է ստացել 24-ը, մնացած 98 քաղաքաշինական եւ հողաշինական գործերը գտնվում են լրամշակման տարբեր փուլերում: ՀՀ տարածքային կառավարման եւ ենթակառուցվածքների նախարարություն է ներկայացվել 29 էլեկտրամատակարարման թույլտվություն ստանալու փաստաթղթերի փաթեթերը համապատասխանեցնելու գործեր, որոնցից դրական եզրակացություն է ստացել 13 գործ, իսկ մնացած 16 գործերը գտնվում են լրամշակման փուլում:

Մարզպետի աշխատակազմին համաձայնեցման է ներկայացվել 21 քաղաքաշինական եւ էլեկտրամատակարարման թույլտվություն ստանալու փաստաթղթերի փաթեթեր, որոնցից դրական եզրակացություն է ստացել 10 փաթեթ, իսկ մնացած 11-ը ուղարկվել է համայնքներ լրամշակման նպատակով:

Գեղարքունիքի մարզում 2025 թվականի ընթացքում համայնքների կողմից տրամադրվել է 951 շինարարության թույլտվություն, որոնցից 64 թույլտվություն տրվել է Գավառ համայնքում, 445 թույլտվություն՝ Մարտունի, 207 թույլտվություն՝ Սեւան, 190 թույլտվություն՝ Վարդենիս եւ 45 թույլտվություն՝ ճամբարակ համայնքներում:

«Գեղամա աշխարհ»

2025 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՈՒՄ ԻՐԱԿԱՆԱՑՎԵԼ ԵՆ ՄԵԾՄԵՇԱՎԱԼ ՀԱՆԱՊԱՐՀԱՇԻՆԱԿԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐ



2025 թվականի ընթացքում Գեղարքունիքի մարզի համար արգասաբեր է եղել ճանապարհաշինության ոլորտը: Ինչպես տեղեկացրին Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի քաղաքաշինության, հողաշինության եւ ենթակառուցվածքների կառավարման վարչությունից, ՀՀ ՏԿԵ նախարարության պատվիրատվությամբ իրականացվել են ճանապարհաշինական 15 խոշոր ծրագրեր, որոնց արդյունքում հիմնանորոգվել են 28,4 կմ, միջին նորոգման ենթարկվել 34,4 կմ տարբեր նշանակության ավտոճանապարհներ: Հիմնանորոգվել է 2 կամուրջ եւ իրականացվել ճամբարակ համայնքի Աղբերք բնակավայրի

վարչական տարածքում առկա սողանքային հատվածի անցանելիության ապահովման աշխատանքները: Իսկ ընդհանուր առմամբ, ներառյալ սուբվենցիոն ծրագրերը, Գեղարքունիքի մարզում 2025 թվականին հիմնանորոգվել կամ միջին նորոգման է ենթարկվել 128 կիլոմետր երկարության միջպետական, հանրապետական, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհներ, որոնց իրականացման նպատակով կատարված ներդրումները կազմել են շուրջ 14,1 միլիարդ դրամ:

«Գեղամա աշխարհ»

ՄԱՐՏՈՒՆԻՆԵՐՔԻՆ ԳԵՏԱՇԵՆ ՄԱՐԶԱՅԻՆ ՆՇԱՆԱԿՈՒԹՅԱՆ ԱՎՏՈՃԱՆԱՊԱՐՀԻ ՀԻՄՆԱՆՈՐՈՎՄԱՆ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԸ ԳՏՆՎՈՒՄ ԵՆ ԱՎԱՐՏԱԿԱՆ ՓՈՒԼՈՒՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում ՀՀ ՏԿԵ պատվիրատվությամբ ու պետությունից տրամադրված միջոցներով արդեն ավարտական փուլում են գտնվում Մարտունի-Ներքին Գետաշեն մարզային նշանակության ավտոճանապարհի հիմնանորոգման աշխատանքները: Մարտունի-Ներքին Գետաշեն ավտոճանապարհի հիմնանորոգման ծրագրի նախաշաղկից արժեքը կազմել է 1 միլիարդ 10 միլիոն դրամ, պայմանագրային արժեքը՝ 737 միլիոն 700 հազար դրամ:



Ծրագրով նախատեսված էր Մարտունի-Ներքին Գետաշեն ավտոճանապարհի երթելակելի մասի հիմնանորոգում 3,4 կիլոմետր երկարությամբ եւ 35 հազար քառակուսի մետր մակերեսով, երկչերտ սաֆալտբետոնյա ծակի տեղադրմամբ, նույն ճանապարհին իրար կապող Արգիճի գետի կամուրջի հիմնանորոգում, 2 կիլոմետր 300 մետր երկարության ու շուրջ 5000 քառակուսի մետր մակերեսով սալիկապատ մայթերի ու ջրահեռացման համակարգի կառուցում: Գննապարհի հիմնանորոգ-

վող մասը սկսվում էր Մարտունի քաղաքի երաժշտական դպրոցի մոտից ու ավարտվում Ներքին Գետաշենի թիվ 2 միջնակարգ դպրոցի դիմացի խաչմերուկում:

Շինարարական աշխատանքները մեկնարկել էին 2025 թվականի հունիսից: Ծրագիրը նախատեսված էր ավարտի հասցնել 250 օրվա ընթացքում, սակայն 2026 թվականի սկզբին դրանք արդեն գտնվում են ավարտական փուլում: Շինարարական աշխատանքներն իրականացրել է «Շանթ-Սեյրան» ՍՊԸ-ն:

2025 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԿԱՊԻՏԱԼ ՆԵՐՎՐՈՒՄՆԵՐԸ ԿԱԶՄԵԼ ԵՆ 14 ՄԻԼԻԱՐԻ 248 ՄԻԼԻՈՆ 914 ՀԱԶԱՐ ԴՐԱՄ

Գեղարքունիքի մարզի Մարտունի համայնքում 2025 թվականին կապիտալ ներդրումները կազմել են 14 միլիարդ 248 միլիոն 924 հազար դրամ:

Ինչպես տեղեկացրեց Մարտունի համայնքի ղեկավար Հովհաննես Հովնյանը, մեծածավալ կապիտալ ներդրումների արդյունքում իրականացվել է 12 պետական ծրագիր ու 65 սուբվենցիոն ենթածրագիր, որոնց շրջանակներում կառուցվել է 27,8 կիլոմետր երկարության միջպետական, մարզային ու համայնքային նշանակության ճանապարհ, 33 կիլոմետր 58 մետր խմելու, 22 կիլոմետր 580 մետր ոռոգման ջրատարներ, 40 կիլոմետր 800 մետր արտաքին լուսավորության ցանց, 1 հանդիսությունների սրահ, հիմնանորոգվել է 2 դպրոցի, 1 մշակույթի տան շենք, շարունակվել են Ներքին Գետաշենի թիվ 1, Գեղհովհի թիվ 2, Երանոսի թիվ 2, Ծովհնարի միջնակարգ, Լեռնակերտի հիմնական դպրոցների ու Մադինայի կրթահամալիրի, Ծակքարի եւ Վաղաշենի առողջության առաջնային պահպանման կենտրոնների եւ Վարդենիկի առողջության կենտրոնի նոր շենքերի կառուցման, Վերին Գետաշենի բուժամբուլատորիայի եւ Արծվանիստի մանկապարտեզի հիմնանորոգման աշխատանքները: Ընդ որում, դպրոցաշինության ոլորտում կապիտալ շինարարության ներդրումները կազմել են 9 միլիարդ 91 միլիոն 469 հազար դրամ, ճանապարհաշինության

ոլորտում 3 միլիարդ 279 միլիոն 155 հազար դրամ: ՀՀ կառավարության կողմից իրականացվող «300 դպրոց 500 մանկապարտեզ» ծրագրի շրջանակներում հիմնանորոգվել եւ վերաբացվել են Վարդենիկի եւ Երանոսի, հիմնից կառուցվել ու բացվել Աստղա-



ծորի եւ Ծովասարի մանկապարտեզները, որոնք հագեցած են արդի չափորոշիչներին համապատասխանող բոլոր պայմաններով: Արծվանիստի մանկապարտեզի հիմնանորոգման ու Մադինայի կրթահամալիրի կառուցման աշխատանքների ավարտից հետո, որը նախատեսված է եկող տարում, արդեն նախադպրոցական տարիքի կրթական հաստատություններով ինքնաբավ կլինեն Մարտունի համայնքի բոլոր բնակավայրերը:

-Այս ձեռքբերումներն ու հաջողություններն առաջին հերթին ապահովվել են ՀՀ կառավարության, Գեղարքունիքի մարզպետի աշխատակազմի, այլ գերատեսչությունների հետ համագործակցության արդյունքում, եւ իհարկե, Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ու համայնքի ավագանու ջանադիր աշխատանքի շնորհիվ: Իրականացված սոցիալ-տնտեսական ու կենսական կարելուր նշանակության բազմաթիվ ու բազմաբնույթ ծրագրերը մեր առջեւ հեթոթանում հնարավորություններն են բացում նոր ու ավելի հավակնոտ ծրագրեր իրականացնելու, համայնքի համար դեռեւս անլուծելի մնացած մյուս հիմնախնդիրներն արմատապես կարգավորելու համար,- նշեց Հովհաննես Հովնյանը:

խոսքով խլղաթյան

ԱՎԵՐԱԿ, ԲԱՅՑ ՇՐԵՂԱՇՈՒՄ ՈՒ ԱՌԻՐ ԽԱՎԱՇԻ ՎԱՆՔԸ

**Տաճար է մեր երկիրը, Սուրբ է ամեն քար...
Վահան Տերյան**

Գեղարքունիքի մարզի պատմաճարտարապետական անթիվ ու հրաշքի նմանվող հուշարձանների մեջ իր վեհությամբ ու շքեղությամբ առանձնանում է Խամշի վանքը, որը մարդկային մտքի բազմաշնորհ շռայլության արգասիք է, աներեւակայելի թռիչք, ստեղծագործ ոգու զորության առհավատչյալ:

Դարեր ի վեր խոնարհված, նույնիսկ հողի հաստ շերտի տակ թաղված այս կառույցը հոգեւոր անհաշվելի ու անսպառ զանազան է, քանզի նրա ամեն մի քարի վրա քանդակ կա, գիծ կան նախշ, զարդապատկեր կան զարդանոտիվ, հայատառ գիր, ու այդ քարերի, վեճերի, սյուների, խոյակների վրա անցնող լիորեն կնքված է Հայոց պատմության փառքը, հայ ժողովրդի մտքի վեհությունն ու սլացքը, ապրելու եւ արարելու անկտորում կամքը, որն այդպես էլ չի խոնարհվել արյունարբու անհամար ազգերի բռնակալության ու ավերող թաթերի, նաեւ բնության դժնդակ արհավիրքների առջեւ:

Խամշի վանքը միաժամանակ Գեղարքունիքի մարզի ամենաթաքնված հուշարձանն է, քանի որ այն գտնվում է Գետիկ գետի ավազանի բնական ու խիտ անտառի գրկում, ճամբարակ համայնքի Մարտունի գյուղից ճակատաբերակալ տանող ճանապարհի հյուսիսակողմում, գրեթե անմարդաբնակ վայրում: Անգամ հուշարձանի կողքով անցնելիս նրան ոչ մի անձանոթ աչք չի կարող նկատել, եթե անցվորը նախօրոք լսած կամ տեղեկացված չլինի այդ հրաշալիքի մասին:

Խամշի վանքի գոյության մասին մինչեւ նախորդ դարի 70-ական թվականները շատ քիչ մարդիկ են իմացել կամ առհասարակ չեն իմացել, քանի որ այն թաղված է եղել հողի հաստ շերտի ու սաղարթավոր հսկա կաղնիների արմատների տակ ու միայն պատահական դիպվածով են մարդիկ հասկացել, որ ինչ-որ հին շինություն կա իրենց ոտքերի տակ:

Հետո, 1979-1985 թվականների ընթացքում, ՀԽՍՀ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի հնագիտական արշավախումբը Գրիգոր Կարախան-

կողմից ՀՀ ԳԱԱ հնագիտության եւ ազգագրության ինստիտուտ գործուղվեց մեր արտահաստիքային թղթակից Նույն Առաքելյանը: Երկար պրպտումներից հետո նա Խամշի վանքի մասին տպագրության ներկայացրեց ծավալուն ու բովանդակալից հողված պեղող հնագիտների կողմից սիրով տրամադրված տվյալների հիման վրա:

Դրանից հետո, երբ թվում էր, թե Խամշի վանքի գաղտնիքների մասին գրավոր ասելիքը մեր կողմից սպառված է, իսկ առաքելությունը ավարտված, հետագա այցերն ու ուսումնասիրությունները մեծ ծնունդ էին նոր խանդավառություններ ու ոգեշնչումներ, միաժամանակ նոր հարցականներ, որոնց պատասխանները միայն վերջերս կարողացա ստանալ, երբ վերջապես, նախորդ տարեվերջին, ՀՀ ԳԱԱ Հնագիտության եւ ազգագրության ինստիտուտի գիտական խորհրդի որոշմամբ լույս ընծայվեց «Խամշի վանքը» պատկերագիրը ու նույնքան շքեղ ձեւավորված գիրքը, որը հեղինակել են Հուսիկ Մելքոնյանը, Գրիգոր Կարախանյանը եւ Դիանա Միրիջանյանը:

Այս գիրքը մեկ այլ հոգեւոր արժեք է, մի թանկ մատուցող, որը ոչ միայն դարերի մոռացությունից փրկում է կործանված շքեղաշուք հուշարձանը, այլ նոր կյանք ու շունչ է տալիս նրան՝ հայ մարդու առջեւ բացելով իր նախնիների մտքի անհատակ, անսպառ շտեմարանը, գեղագիտական ճաշակը, կենսասիրությունն ու հավատի զորությունը:



Մի բան է միայն ցավալի, որն առաջին հերթին եղել է հենց գրքի հեղինակների, կամ որ նույնն է, Խամշի վանքը պեղող հնագետների հոգու խռովահույզ ցավը, այն, որ այս անկրկնելի հուշարձանն այդպես էլ մինչ օրս չվերականգնվեց իր շքեղաշուք տեսքի մեջ, թեեւ այդ ուղղությամբ էլ երկար են տքնել նրանք, զուրգուրել հողի տակից հանված ամեն մի քար ու կոթող, համարակալել, հաշվարկել, ստացել տաճարի, զավիթի, փոքր եկեղեցու, ավանդատների հատակագիծը:

Այս հուշարձանի վերականգնումն այսօր առավել քան հրատապ ու կարեւոր, անգամ մշակութային գոյաբանական հարց է այն առումով, որ Խամշի վանքը, գրքի հեղինակների խորին համոզմամբ, Արցախի Գանձասարի նախատիպն է

յանի ղեկավարությամբ ձեռնարկել է Խամշի վանքի պեղումները անցած դարերի մոռացության փոշիների, թամբ ծառաստանի ծածկի տակից հողի երես հանելով՝ զարմանահրաշ վանական համալիր, որն անգամ ավերակների մեջ երեւելի է իր ողջ հմայքով, քանդակների գեղեցկությամբ ու բազմազանությամբ, ճարտարապետական ճոխ հարդարանքով:

Սա այնպիսի հուշարձան է, որի կառուցվածքին, մտահղացմանը, առանձնահատկություններին ծանոթանալու համար ոչ միայն ժամեր կան օրեր են հարկավոր, այլ՝ բազմաթիվ այցելություններ ու մանրագնին ուսումնասիրություններ, քանզի պատմահնագիտությամբ ու պատմաճարտարապետությամբ հետաքրքրված ամեն ոք ստիպված է լինելու, անկախ իր կամքից, հայացք սեւեռել աջուձախ գետներես ընկած քարերին, խոյակների ու սյուների բեկորներին, բենառէջքին, կամարներին, խաչքարերին, զմբեթի ու թմբուկի մաս կազմող տարրերին, թռչունների կամ կենդանիների ու մարդկանց պատկերաքանդակներին, որոնցից յուրաքանչյուրն իրենից արվեստի գլուգործոց է ներկայացնում, մարդկային մտքի կատարելություն:

Ինձ քանիցս բախտ է վիճակվել լինել Խամշի վանքում, ժամեր շարունակ պտտվել հուշարձանի տարածքով մեկ, ապշած նայել քարեղեն հրաշքներին, ցնցվել ու հուզվել այդ վեհություններով, սակայն ամեն անգամ, երբ փորձել եմ ներշնչանքս վերածել գրի, հասկացել եմ, որ ինչ-որ բան թերի, հացական է մնացել մեզս վանքի պատմության ու պատմաճարտարապետական առանձնահատկություններն ամբողջությամբ ներկայացնելու եւ արտացոլելու համար:

Երկար որոնումները ստիպեցին ինձ՝ դիմել հուշարձանը պեղող հնագետներ Գրիգոր Կարախանյանի եւ Հուսիկ Մելքոնյանի օգնությանը: Այդ նպատակով դեռեւս 2012 թվականին «Գեղամա աշխարհ» թերթի

հանդիսանում: Դաժանաբար, պիղծ, հայասպան ոստիների ձեռքերով կորսված Գանձասարը մեզմից օր ու ժամ առաջ է պահանջում՝ ամեն միջոց գտնել Խամշի վանքը վերականգնելու եւ սերունդներին ու դարերին այն իր վեհ տեսքով հանձնելու համար: Ավելորդ չեմ համարում նշել, որ Խամշի վանքի կործանողներն էլ հենց եղել են նույն ավարառու, քոչվոր ու բարբարոս թշնամիները, ովքեր գրեթե հողին են հավասարեցրել կաթողիկոսանիստ վանքը, որպեսզի տարածքից իսպառ ջնջեն հայկականության հետքերը:

Այս գրքի մեջ ամփոփված է հայ ժողովրդի հերոսական ու ողբերգական անցյալը, տեւական մաքառման, ինքնության պահպանման ու զարգացման, դժվարին զոյապայքարի ուղին, նաեւ համաճարի ու Աստվածատուր շնորհների արտացոլանքը: Սրանով ոչ միայն փրկվել է հեղինակների երկար տարիների տնքաջան աշխատանքն ու ուսումնասիրությունները, այլ նաեւ մի մնայուն քայլ է արվել հուշարձանի բազմաթիվ գաղտնիքների բացահայտման ու համարայնացման, ինչպես նաեւ վերականգնման ճանապարհին:

Մի դիտարկում եւս, որը կուզեի ուղղել թե՛ պետական ու տեղական ինքնակառավարման մարմիններին, թե՛ գործարարներին ու բարերարներին՝ որոշակի մեծ տպաքանակով վերահրատապելու այս գիրքը, քանի որ այն տպագրվել է



խիստ սահմանափակ տպաքանակով՝ մի քանի տասնյակի չափով, ինչն արդեն իսկ անհասանելի է ընթերցող լայն շրջանակների համար: Մինչդեռ այն պետք է դառնա ոչ միայն գիտությամբ զբաղվողների, այլ մասնագետների, այլ ցանկացած գրագետ հայ մարդու սեղանի գիրքը:

Խամշի վանքը, ինչպես հաստատված է ուսումնասիրությունների արդյունքներով, հասարակ վանք չի եղել, այլ որոշակի ժամանակ ծառայել է որպես կաթողիկոսական կենտրոն կամ նստավայր, ուր, դատելով ավանդատների, օժանդակ շինությունների ու շրջակա գերեզմանոցի գոյությունից, գործել են բավականին սովոր թվով հոգեւորականներ:

Վանքը հիմնադրվել է 13-րդ դարի սկզբին, Աղվանից եկեղեցու առաջնորդ Հովհաննես Հայրապետի կողմից, Հայոց իշխանապետեր Չաքարե եւ Իվանե Չաքարյան եղբայրների սիրահոժար համաձայնությամբ, ինչի մասին վկայել է միջնադարյան հայ պատմիչ Կիրակոս Գանձակեցին:

Միջնադարյան հայ ճարտարապետության այս գլուխգործոցի հիմնարկերը կապվում է Աղվանից աշխարհի կաթողիկոս Հովհաննես 2-ի անվան հետ, ով գահակալել է 1195-1235 թվականներին: Հավելենք, որ Աղվանից կաթողիկոսությունը միշտ գործել է Հայ Առաքելական եկեղեցու գահեղեցությանը, իսկ Աղվանցուն քրիստոնեության տարածումն ու եկեղեցաշինությունը հիմնականում կապվում է Գրիգոր Լուսավորչի թոռ Գրիգորիսի անվան հետ:

Հովհաննես Հայրապետը Իվանեին ու Չաքարեին է դիմում իրեն կաթողիկոսանիստ տարածք տրամադրելու համար, քանի որ, Կիրակոս Գանձակեցու վկայությամբ, շատ է նեղվում այլազգիներից:

Հովհաննես Կաթողիկոսի մահից հետո հայրապետական աթոռին է բազմում նրա եղբայր Ներսես Գ-ն, ով գահակալել է 1235-1262 թվականներին: Նա համարվում է հայ եկեղեցու ամենահայտնի սպասավորներից մեկը: Նույն Կիրակոս Գանձակեցու վկայությամբ՝ ժամանակին այնքան հռչակված է եղել Խամշի վանքի գահակալ Ներսեսի անունը, որ նրան պալատ է հրավիրել մոնղոլական մեծ խան Չարսաղանի կին Ելթինա Խաթունը: Ճոխ եւ մեծ հարգանքով ընդունելության արժանանալուց հետո Ներսեսը պաշտոնակալման է վերադառնում Խամշի վանք:

Խամշի վանքում է գտնվում Հովհաննես Հայրապետի գերեզմանը: «Վանքի հնագիտական պեղումների ժամանակ մեծ տաճարի հարավարեւմտյան ավանդատան հատակին բացվեց զանգվածով մի տապաքանաբար, որը զբաղեցնում էր սրահի ողջ հատակը: Ելնելով տապաքանաբարի չափից եւ տաճարի ներսում թաղվելու հանգամանքից, կարծում ենք, որ դա Հովհաննես Հայրապետի գերեզմանն է, թեւ վրան հիշատակագիր չկա»,- վկայում են գրքի հեղինակները:

**Խոսրով Խլղաթյան
/շարունակելի/**



ԳԵՂԱՍՍ 6

Գեղարքունիքի մարզի Սեւան համայնքում արդեն հայտնի են 2025 թվականին միջազգային տարբեր մարզական ստուգատեսներում աչքի ընկած ու լավագույն ճանաչված մարզիկների անունները:

Սեւանցի մարզիկները 2025 թվականին էլ շարունակել են լավագույն ավանդույթները մասնակցելով հանրապետական, համահայկական, միջազգային առաջնություններին եւ մրցաշարերին: Տարեկանը չհամարվել են մարզաշխարհում գրանցած արդյունքները, հայտնի են լավագույն մարզիկները:

Նրանք են Սեւանի Ն. Դագարյանի անվան մանկապատանեկան մարզադպրոցի մարզիկ Ռազմիկ Շուշանյանը, Հովհաննես Հովհաննիսյանը, Հովսեփ Դարիբյանը, Կարինե Դավաթյանը, Ալինա Սուքիասյանը, Էմին Գալստյանը, Գոռ Դարիբյանը, Սեւանի ջրային մարզաձեւերի մանկապատանեկան մարզադպրոցի սաներ Վահե Դավթյանը, Գեորգ Փիլոսյանը, Տիգրան Խաչատրյանը, Սուրեն Թովմասյանը, Արեգ Հովհաննիսյանը, Նարե Սուքիասյանը:

Ռազմիկ Շուշանյանը ՌԴ Կստովո քաղաքում անցկացված (Եվրասիական խաղեր) K-1 քիթբոքսինգի գավաթի առաջնության չեմպիոն է, առաջին մրցանակակիր, միջազգային մրցաշարերի չեմպիոն (մարզիչ Էդգար Դարիբյան):

Հովհաննես Հովհաննիսյանը ՀՀ երիտասարդների ծանրամարտի առաջ-

ՍԵՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՀԱՅՏՆԻ ԵՆ ՄԱՐԶԱԿԱՆՈՒՄԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ԼԱՎԱԳՈՒՅՆ ՄԱՐԶԻԿՆԵՐԻ ԱՆՈՒՆՆԵՐԸ



նության երկրորդ մրցանակակիր է, Իրանի Իսլամական Հանրապետությունում անցկացված բանակայինների աշխարհի առաջնության երրորդ մրցանակակիր (մարզիչ Գառնիկ Աբրահամյան):

Հովսեփ Դարիբյանը ՌԴ Կստովո քաղաքում անցկացված (Եվրասիական խաղեր) K-1 քիթբոքսինգի գավաթի առաջնության փոխչեմպիոն է, երկրորդ մրցանակակիր, միջազգային մրցաշարերի չեմպիոն (մարզիչ Էդգար Դարիբյան):

Կարինե Դավաթյանը Սերբիայի Ջլատիբո քաղաքում անցկացված Եվրոպային բռնցքամարտի առաջնության երկրորդ մրցանակակիր է (մարզիչ Հովսեփ Կարդախյան):

Ալինա Սուքիասյանը ՀՀ մեծահաս-

ակների ծանրամարտի առաջնության առաջին մրցանակակիր է, Ալբանիայի Դյուրես քաղաքում անցկացված երիտասարդների ծանրամարտի Եվրոպային առաջնության մասնակից (5-րդ տեղ), (մարզիչ Գառնիկ Աբրահամյան):

Էմին Գալստյանը ՀՀ պատանիների թանքվոնոյի առաջնության առաջին մրցանակակիր է (մարզիչ Դավիթ Թորոսյան):

Գոռ Դարիբյանը Լատվիայի Ռիգա քաղաքում անցկացված օլիմպիական թանքվոնոյի պատանիների Եվրոպային առաջնության երրորդ մրցանակակիր է (մարզիչ Արման Գրիգորյան):

Սեւանի ջրային մարզաձեւերի մանկապատանեկան մարզադպրոցի սաներ Վահե Դավթյանը ու Գեորգ Փիլոսյանը ՀՀ առաջնության բազմակի չեմ-

պիոններ են, աշխարհի մեծահասակների առաջնության մասնակիցներ (Կանոն-2), (մարզիչ Ավետիք Մալխասյան): Տիգրան Խաչատրյանը, Սուրեն Թովմասյանը ՀՀ առաջնության բազմակի չեմպիոններ են, միջազգային մրցաշարերի մրցանակակիրներ (Բայրակա-2), (մարզիչ Արմեն Մալխասյան):

Սուրեն Թովմասյանը ՌԴ-ում մասնակցել է «Բարի կամքի գավաթ» միջազգային մրցաշարին եւ ճանաչվել հաղթող, Արեգ Հովհաննիսյանը նույն մրցաշարում գրավել է երկրորդ տեղը:

Նարե Սուքիասյանը ՀՀ առաջնության 2025 թվականի չեմպիոն է, Հովի. Իսակովի անվան մրցազգային մրցաշարի առաջին մրցանակակիր «Լույ» դասում: (մարզիչ Հայկ Սուքիասյան):

Մեր մարզիկները ողջ տարվա ընթացքում փայլել են հանրապետական ու միջազգային մրցաշարերում, իսկ այդ արդյունքները միայն ու միայն պայմանավորված են ջանադիր, նպատակասլաց աշխատանքով: Իսկ մեր համայնքը շատ հպարտ ու գոհ է այդ նվաճումներով Շնորհավորում ենք մեր լավագույն մարզիկներին, նրանց մարզիչներին, մարզադպրոցների անձնակազմին, մարզում, որպեսզի 2026 թվականն էլ հաղթանակներն ու ձեռքբերումները լինեն շարունակական, իսկ մեր մարզիկները լավագույն ներկայացնեն Սեւան համայնքը ու Հայաստանի Հանրապետությունը տարբեր առաջնություններում եւ մրցաշարերում:

Արմեն Դուկասյան

ԳԱՎԱՌՈՒՄ «ՎԱՐԿԱՌԻԹ» ՏԵՍԱԿԻ ՄԱՐԶԱՀՐԱԿԱՐԱԿ Է ԲԱՅՎԵԼ

Գեղարքունիքի մարզկենտրոն Գավառ քաղաքում ՀՀ կառավարության եւ Գավառի համայնքապետարանի համատեղ ֆինանսավորմամբ «Վարկառիթ» տեսակի մարզահրապարակ է բացվել:

Բացօթյա մարզահրապարակը կառուցվել է Գավառ քաղաքի Ազատության 2-րդ փողոց 2-րդ փակուղիի հասցեում բազմաբնակարան շենքերի տարածքում: Մարզահրապարակի բացման արարողությանը ներկա էին համայնքապետարանի ներկայացուցիչներ, Գավառի Գրիշա Ափրոյանի անվան մարզադպրոցի, մարզադպրոցի տարածքային ստորաբաժանումների, ինչպես նաեւ «Street Workout» ֆեդերացիայի մարզիկներ, ովքեր մարզական ներկայացումների միջոցով միջոցառման մասնակիցների համար բացահայտեցին մարզահրապարակի հնարավորություններն ու մարզվելու ձեւերը:

Մարզահրապարակը կառուցվել է «Street Workout» ֆեդերացիայի հետ ակտիվ համագործակցությամբ, սահմանած չափորոշիչներին համապատասխան ապահովելով անվտանգ, որակյալ եւ ժամանակակից մարզվելու միջավայր: Այս խա-



ղահրապարակում մարզվել ցանկացողները կարող են այն առավել գրագետ կազմակերպել «Քյուռա» կողերի միջոցով, որի տեսանյութերը ուղեցույցի դեր են կատարում:

Մարզահրապարակը կառուցվել է «Մասնակցային բյուջետավորում-2025» ծրագրի շրջանակներում կառավարություն-համայնք համատեղ ֆինանսավորմամբ: Ծրագրի ընդհանուր արժեքը 23 միլիոն 490 հազար դրամ է, որի 56,6 տոկոսը Գավառ համայնքի, իսկ 43,4 տոկոսը պետության ներդրումն է:

«Մասնակցային բյուջետավորումը» ենթադրում է ծրագրային առաջարկներ բնակիչների, նախաձեռնող խմբերի եւ կազմակերպությունների կողմից, որոնք քվերակության արդյունքում հաղթող են ճանաչվում: «Սպորտ + ժամանց Գավառում» համապարփակ ծրագիրը ներառել է նաեւ այս մարզահրապարակի կառուցումը, ինչը մշակվել ու ներկայացվել է «Ռեստարտ Գավառ» երիտասարդական հասարակական կազմակերպության նախաձեռնությամբ:

Գավառում իր տեսակով եզակի մարզահրապարակը հանրային, անվճար եւ բաց է բոլորի համար: Այն նպատակ ունի խթանել առողջ ապրելակերպը, ֆիզիկական ակտիվությունը, երիտասարդների ներգրավվածությունն ու համայնքային կյանքի աշխուժացումը:

Ալվարդ Մանուկյան

ԳԱՎԱՌՈՒՄ ՄԱՆԿԱԿԱՆ ԽԱՂԱՀՐԱԿԱՐԱԿ ՈՒ ՖՈՒՏՐՈՒԻ ԴԱՇՏ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ



«Գավառի Մասնակցային բյուջետավորում-2025» ծրագրով Գավառ քաղաքի Ազատության փողոցի բազմաբնակարան շենքերի տարածքում մանկական խաղահրապարակ եւ ֆուտբոլի խաղադաշտ է կառուցվել: Ծրագրերը նախաձեռնել եւ մշակել է Գավառ քաղաքի բնակիչ Լենա Գոհարյանը: Դրանք քվեարկությամբ հաղթող են ճանաչվել եւ արդեն իրագործված են: Նախագիծը կյանքի է կոչվել համայնք-կառավարություն համատեղ ֆինանսավորմամբ: Մանկական խաղահրապարակն արժեքել է 21 մի-

լիոն դրամ, իսկ ֆուտբոլի դաշտը 14 միլիոն 140 հազար դրամ: Երկու ծրագրերի արժեքների 56,65 տոկոսը տրամադրվել է համայնքի, 43,35 տոկոսը պետական բյուջեից: Համայնքապետարանի «Մասնակցային բյուջետավորում ծրագրի» համակարգողը հավաստիացրել է, որ գործընթացը շարունակական է, եւ 2026 թվականին եւս այս սկզբունքով համայնքի զարգացմանը նպաստող մի շարք ծրագրեր են կյանքի կոչվելու:

Ալվարդ Մանուկյան

ՄԱՐՏՈՒՆԻՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՏԱՐԵՎԵՐՁՅԱՆ ՄԱՐԶԱԿԱՆ ՄՐՑԱՆԱԿԱՐԱՇԽՈՒԹՅՈՒՆԸ



Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի մշակույթի տանը տեղի է ունեցել տարեկան մարզական մրցանակաշխույթում, որին մասնակցել են Մարտունի համայնքապետարանի մարզադպրոցի աշխատակիցներ, մարզիկներ, մարզիչներ, հյուրեր: Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, «Մարտունու մարզադպրոցի լավագույն մարզիչ» անվանակարգում տարվա լավագույնը ճանաչվել է ֆուտբոլի մարզիչ Արթուր Սաֆարյանը, իսկ «Մարտունու մարզադպրոցի լավագույն մարզիկ» անվանակարգում լավագույն մարզիկներ են ճանաչվել 2025 թվականի ընթացքում բռնցքամարտ մարզաձեւում մեծ հաջողություններ գրանցած Սիմոն Սիմոնյանը, Կարեն Զախարյանը եւ Էլեն Բարսեղյանը: Մրցանակակիրներին Մարտունու մարզադպրոցի տնօրեն Սամվել Մոսեյանի կողմից հանձնվել են հավաստագրեր եւ հուշանվերներ:

Մի շարք մրցանակներ ստացել են նաեւ Հայաստանի բռնցքամարտի ֆեդերացիայի Գեղարքունիքի մարզի շնորհալի մարզիկներ եւ մարզիչներ: Միջոցառումը նաեւ նշանավորվել է կես դարից ավել բռնցքամարտի մարզչական կենսագրություն ունեցող վաստակաշատ վարպետ Վազգեն Շահինյանի մարզական կարիերայի ավարտի առթիվ մեծարման հանդիսավոր արարողությամբ: Վերջինս ՀՀ Գեղարքունիքի մարզի բռնցքամարտի ֆեդերացիայի նախագահ Գեորգ Սարգսյանի կողմից արժանացել է պատվոգրի եւ հուշանվերի: Մրցանակաբաշխության արարողությունը երափակվել է համերգային ծրագրով:

«Գեղամա աշխարհ»

ԳՆԵԼ ԳԱՍԱՐՅԱՆ ԱՆԿՐԱԶՈՐԻ ԱՆՊԱՐՏԵԼԻ ԱՐԾԻՎԸ

Հերոսները հասարակ մահկանացուներ չեն, այլ բացառիկ մարդիկ, որոնց խիզախումը, նվիրումն ու զոհաբերությունը սահմաններ չեն ճանաչում, որոնց անունները սերունդների հիշողությունից չեն ջնջվում դարեր շարունակ:

Ինչպես իր «Հերոսը» հոդվածում գրել է հայ ակնավոր բանաստեղծ, Մեծ եղեռնի զոհ Դանիել Վարուժանը «Իմաստասերները եւ ընկերաբանները կու գան շաղկվել իրենց վարդապետություններով հառաջդիմության շաղախը, լավագույն կենցաղի մը մտատիպարը, բայց հերոսն է, գերմարդը, որ այդ ապագա լավագույն կյանքին շեմքին հիմունքը պիտի հաստատե, մարմար մարմարի վրա պիտի գետեղե, պիտի տեղավորե լուսակառույց սյունները, երկաթները պիտի ձգե որմն որմ, մինչեւ որ կերտվի քաղաքակրթության տաճարը, սյունները շողան, խորանը պատրաստ ըլլա ընդունիլ կարենալու համար գաղափարին զոհը, եւ այդ զոհը՝ ինքն է: Տաճարը կառացանող նույն այդ հերոսը. իր արյունը պիտի հեղու սեղանին վրա իբրեւ դրոշմը խոտելին տիրապետության: Այս գռեհիկ աշխարհին վրա ամեն գերմարդ զոհ մըն է: Եվ առանց զոհի՝ հերոս չկա»:

Ահա նման ապրող ու ապրեցնող հերոսներից մեկը մեզանում Գնել Գասարյանն է, Ախպրածոր գյուղի հզոր,

անպարտելի այն արծիվը, ով իր կյանքի զնով 2022 թվականի սեպտեմբերին մինչեւ արյան վերջին կաթիլն անսաման կանգնեց հայրենի երկրի պաշտպանության դիրքերում մահից առաջ անվարան մեռցնելով մեր հայրենիքը կործանելու եկած թշնամիներին:

Գնել Գասարյան ծնվել է 1987 թվականի օգոստոսի 11-ին, Գեղարքունիքի մարզի Ախպրածոր գյուղում: 1994-2004 թվականներին սովորել է տեղի միջնակարգ դպրոցում, գերագանց առաջադիմությամբ:

Դպրոցն ավարտելուց հետո, 2004 թվականին ընդունվել է Վարդենիսի Վիկտոր Համբարձումյանի անվան մանկավարժական ինստիտուտի պատմության ֆակուլտետ: 2005 թվականին զորակոչվել է Հայկական բանակ՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության: Ծառայել է Արցախի Հանրապետության Մարտունու 3-րդ պաշտպանական շրջանի N զորամասում:

2007 թվականին վերադառնալով պարտադիր զինվորական ծառայությունից՝ շարունակել է ուսումը, որն ավարտել է 2011 թվականին:

2017-2018 թվականներին, վերապատրաստման նպատակով, սովորել է Վազգեն Սարգսյանի անվան ռազմական ինստիտուտում: Արժանանալով



սպայի կոչման շարունակել է ծառայությունը ՀՀ զինված ուժերում: Նույն թվականին պայմանագրային զինվորական ծառայության է անցել Արցախի Հանրապետության Շահումյանի շրջանի Քարվաճառ բնակավայրի N զորամասում: Եղել է ավագ լեյտենանտ, դասակի հրամանատար: Գնելը մասնակցել է 2020 թվականի սեպտեմբերի 27-ին սկսված 44-օրյա

պատերազմի ռազմական գործողություններին: Անհավասար եւ թեժ մարտերի ժամանակ ստացել է բեկորային ծանր վիրավորում: Բուժվելու նպատակով դուրս է եկել ծառայությունից:

2021 թվականին նա կրկին անցել է ծառայության ՀՀ Գեղարքունիքի մարզի Վարդենիս ստացել Սոթք գյուղի N զորամասում: Արժանացել է դասակի հրամանատարի կոչման:

2022 թվականի սեպտեմբերի 13-ին Արրեջանի Հանրապետության զինված ուժերը Հայաստանի արելեյան սահմանների նկատմամբ լայնամասշտաբ ռազմական գործողություններ սկսեցին: Ավագ լեյտենանտ Գնել Գասարյանը մասնակցել է հայրենիքի սահմանների պաշտպանության անհավասար եւ թեժ մարտերին: Կռվել է արիաբար, մինչեւ արյան վերջին կաթիլը եւ անմահացել թշնամու կողմից արձակած ԱՌՍ-ի հարվածից:

Գնել Գասարյանը հուղարկավորված է «Եռաբլուր» զինվորական պանթեոնում:

Մեր հերոսը հետմահու պարգևատրվել է «Մարտական ծառայություն» մեդալով:

Գնելն ամուսնացած էր, ունի 3 երեխա:

Խոսքով Խլղաթյան

ՄԵԾԱՐՎԵԼ Է ՎԵՑ ՏԱՄԱՄՅԱԿԻՑ ԱՎԵԼ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՈԼՈՐՏՈՒՄ ԱՇԽԱՏՈՂ ԼԱՐԻՄԱ ՄԻՆԱՅԱՆԸ



Գեղարքունիքի մարզի Վարդենիս համայնքի Արեգունի գյուղի միջնակարգ դպրոցում տեղի է ունեցել մեծարժան երեկո՝ նվիրված դպրոցի երկարամյա մանկավարժ, ռուսաց լեվի եւ գրականության ուսուցչուհի

չուհի Լարիսա Նիկոլաևնա Մինասյանին: Արեգունու միջնակարգ դպրոցի տնօրեն Անայա Պատվականյանի տեղեկացմամբ՝ ազգությամբ ուկրաինուհի Լարիսա Նիկոլաևնան իր կյանքն ու ճակատագիրը կապել է Հայաստանի հետ՝ ընտանիք կազմելով այստեղ եւ տարիների ընթացքում սրտանց պահպանելով ու փոխանցելով հայկական արժեքները:

-63 տարվա հարուստ մանկավարժական գործունեությամբ նա իր անջնջելի հետքն է թողել կրթության ոլորտում՝ աշխատելով տարբեր դպրոցներում, քոլեջում եւ մինչ օրս շարունակելով իր նվիրական առաքելությունը Արեգունու միջնակարգ դպրոցում՝ որպես ռուսաց լեզվի ուսուցչուհի: Նա իր մասնագիտական գիտելիքը համադրել է մարդկային ջերմության, համբերության եւ նվիրումի հետ՝ դառնալով սիրված ու հարգված ուսուցիչ մանկավարժական կոլեկտիվի, համայնքի եւ հազարավոր աշակերտների համար: Այս երկուն երախտագիտության, զնախատանքի եւ խոնարհման խոսք էր մի մարդու հանդեպ, որի տարիները դարձել են ոսկե հետք սերունդների հիշողության մեջ, - ներկայացրեց Անայա Պատվականյանը: Մեծարման երեկոյի ընթացքում Լարիսա Նիկոլաևնան Արեգունու միջնակարգ դպրոցի տնօրեն Անայա Պատվականյանի, ինչպես նաեւ մանկավարժական, աշակերտական եւ ծնողական խորհուրդների կողմից արժանացել է շնորհակալագրերի եւ պատվոգրերի:

Լարիսա Նիկոլաևնա Մինասյանը 83 տարեկան է: Նա աշխատել է Ակունքի միջնակարգ դպրոցում, Վարդենիսի թիվ 2 հիմնական դպրոցում, Վարդենիսի Վ.Համբարձումյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտում, Վարդենիսի Բաղեյան պետական քոլեջում: Նա եկել է Ղազախստանի Կարագանդա քաղաքից: Ամուսնացել է եւ տեղափոխվել Վարդենիս քաղաք, ունեցել է երկու տղա:

-Ես սրտով, բախտով ու ճակատագրով կապվել եմ Հայաստանի ու հայ ժողովրդի հետ: Անսահման սիրով եմ լցված թե՛ իմ հայրենիքի ու ընտանիքի, թե՛ իմ մասնագիտական աշխատանքի հանդեպ: Հայրս եմ իմ ապրած տարիներով, իմ աշխատանքով, աշակերտներով, աշխատանքային վաստակով: Իսկ այս պահով անսահման երջանկությամբ եմ լցված, քանի որ արժանանում եմ գործընկերներին, աշակերտներին, հարազատ շրջապատիս մեծարմանն ու անկեղծ զնախատանքին,-նշել է Լարիսա Մինասյանը:

Մեծարման երեկոյին մասնակցել են Լարիսա Մինասյանի նախկին աշակերտները եւ գործընկերները:

Խոսքով Խլղաթյան

ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՄԱՐՏՈՒՆԻ ՀԱՄԱՅՆՔԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՏԱՐԵԿԱՆ ԲՅՈՒՋԵԻ ՆԱԽԱԳԾԻ ՀԱՆՐԱՅԻՆ ՔՆՆԱՐՎՈՒՄԸ

Գեղարքունիքի մարզի Մարտունու համայնքապետարանում տեղի է ունեցել Մարտունու համայնքի 2026 թվականի տարեկան բյուջեի նախագծի հանրային քննարկում, որը վարել է Մարտունու համայնքի ղեկավարի տեղակալ Արմեն Շահինյանը:

Ինչպես տեղեկացրին Մարտունու համայնքապետարանի աշխատակազմից, քննարկմանը մասնակցել են համայնքապետարանի եւ համայնքային կառույցների ներկայացուցիչներ, երիտասարդներ, համայնքի բնակիչներ, շահագրգիռ անձինք:

Մարտունու համայնքի բյուջեն ներկայացրել է Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման եւ հավաքագրման բաժնի պետ Թաթուլ Դավթյանը:

Ըստ գեկուցողի՝ Մարտունու համայնքի վարչական բյուջեն 2026 թվականին կազմելու է 5 միլիարդ 588 միլիոն 560 հազար դրամ, որից համայնքի սեփական եկամուտները կկազմեն 1 միլիարդ 402 միլիոն 527 հազար դրամ, պետության կողմից տրված դոտացիան՝ 4 միլիարդ 186 միլիոն 33 հազար դրամ:

Քննարկման ընթացքում ներկայացվել են բյուջեի նախագծի հիմնական ուղղությունները, նախատեսվող ծրագրերն ու առաջնահերթությունները: Բյուջեի միջոցներն առավելապես կուղղվեն սոցիալ-տնտեսական ու կենսական նշանակության ծրագրերի իրականացմանը, ենթակառուցվածքների զարգացմանը, բնակչության կենսապայմանների բարելավմանը եւ տարբեր ոլորտներում առկա հիմնախնդիրների կարգավորմանը:

Քննարկման ընթացքում խոսվել է նաեւ միջազգային կառույցների աջակցությամբ սարքավորումների եւ սպասարկող տեխնիկայի ձեռքբերման, Մարտունու քաղաքում երիտասարդական կենտրոնի տարածքի հիմնադրումն ու շահագործման, միջհամայնքային եւ ներքաղաքային հանրային տրանսպորտի, կեղ-

տաջերի 2 կենսաբանական մաքրման կայանների կառուցման, համայնքի բոլոր բնակավայրերում «Կոտայքի եւ Գեղարքունիքի ԿԿԹԿ»-ի միջոցով կենտրոնական աղբահանության կազմակերպման, Մարտունու կենտրոնական գրադարանի վերակառուցման, Մարտունու քաղաքի եւ Չորագյուղ բնակավայրի մանկապարտեզների շենքերի հիմնանորոգման եւ վերանորոգման աշխատանքների, Մարտունու քաղաքի գլխավոր մարզադաշտի կառուցման եւ ֆուտբոլային ակումբի հիմնման, «ԹՈՒՄՈ» ստեղծարարական տեխնոլոգիաների կենտրոնի հիմնման, սիրողական մարզաձեւերի սպորտային համալիրի կառուցման, Մարտունու քաղաքի Գետափնյա -2 փողոցի երկայնքով գետեզերքին հանրության համար ճեմուղու կառուցման եւ նախատեսված այլ ծրագրերի մասին, որոնք նախատեսված է իրականացնել 2026 թվականի ընթացքում:

Անդրադարձ կատարվեց նաեւ «Մասնակցային

բյուջետավորման» գործընթացով նախատեսված ծրագրերին, որոնց իրականացման համար 2026 թվականին կհատկացվի 106 միլիոն դրամ: Ինչպես տեղեկացրեց Մարտունու համայնքապետարանի աշխատակազմի Զարգացման ծրագրերի, զբոսաշրջության եւ սպասարկման բաժնի գլխավոր մասնագետ Վարազդատ Միերյանը, համայնքապետարանի կողմից կողմից 2025 թվականին տեղական բյուջեից հատկացվել էր 40 միլիոն դրամ, որով ֆինանսավորվել են համայնքի բնակիչների կողմից առաջադրված եւ հավանումների արդյունքում հաղթող ճանաչված երկու ծրագրեր, որոնց իրականացման շնորհիվ հիմնանորոգվել են Ներքին Գետափնյա մշակույթի սենյակի ճեմուղի եւ Գեղիկիտում գործող բռնցքամարտի մարզասենյակը՝ գույքի ապահովմամբ:

-2026 թվականի համար համայնքի ավագանին կրկին հաստատեց 40 միլիոն դրամի հատկացումը «Մասնակցային բյուջետավորման» գործընթացին,

որին գումարվեց նաեւ ՀՀ կառավարության կողմից նախատեսված միջոցներից Մարտունու համայնքին ուղղված մոտ 66 միլիոն դրամ գումարը, ինչի արդյունքում էլ այս տարի բնակչության կողմից ներկայացված լավագույն գաղափարների իրագործման համար առկա է մոտ 106 միլիոն դրամ գումար: Մասնակցային բյուջետավորման գործընթացի մեկնարկի նպատակով հրավիրված քննարկման ընթացքում մասնակիցները հնարավորություն ունեցան բարձրաձայնելու իրենց առաջարկներն ու դիտարկումները, ինչպես նաեւ ստանալու պատասխաններ ինչեցված հարցերին: Առաջիկայում օրենքով սահմանված կարգով նախատեսված քվեարկության արդյունքներով հաղթող ճանաչված ծրագրերը կրկին գործողության մեջ. - ներկայացրեց Վարազդատ Միերյանը:

«Գեղանա աշխարհ»



ԳԱՎԱՌԻ ՊԵՏԱԿԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆՈՒՄ ՏԵՂԻ Է ՈՒՆԵՑԵԼ ՀՐԱՆՏ ՄԱԹԵՎՈՍՅԱՆԻ ԾՆՆՈՒՅԱԼ 90-ՐԴ ՏԱՐԵՂԱՐԹՈՒՆ ԵՎԻՐՎԱԾ ԳԻՏԱԺՈՂՈՎ

Գավառի պետական համալսարանի ուսանողական գիտական ընկերության նախաձեռնությամբ հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետում տեղի է ունեցել ուսանողական գիտաժողով՝ նվիրված հայ մեծանուն գրող-արձակագիր Հրանտ Մաթևոսյանի ծննդյան 90-րդ տարեդարձին:

Ինչպես տեղեկացրին Գավառի պետական համալսարանի լրատվության եւ արտաքին կապերի բաժնից, բացման խոսքով հանդես է եկել ԳՊՀ հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ուսանողական գիտական ընկերության նախագահ Քրիստինե Բատիկյանը:

Ողջունելով ներկաներին՝ բանասիրական գիտությունների դոկտոր, պրոֆեսոր, ԳՊՀ հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ, մաթևոսյանագետ Վաչագան Գրիգորյանը շնորհակալություն է հայտնել գիտաժողովի մասնակից ուսանողներին՝ Հրանտ Մաթևոսյանի ստեղծագործական ժառանգությունը բազմակողմանիորեն ուսումնասիրելու համար:

Գիտաժողովին մասնակցել եւ Հրանտ Մաթևոսյանի խորն ու բազմաշերտ ասելիքի, ստեղծած գեղարվեստական աշխարհի առանձնահատկությունների եւ կերտած կերպարների մասին խոսել են ԳՊՀ ռեկտոր Ռուզաննա Հակոբյանը, Հունանիտար մասնագիտությունների ֆակուլտետի ղեկան թաթուլ Ասոյանը, Հասարակա-



կան գիտությունների ամբիոնի վարիչ Հանլետ Ղաջոյանը, Օտար լեզվի եւ գրականության ամբիոնի վարիչ Գայանե Միրիբյանը, Հայոց լեզվի եւ գրականության ամբիոնի դասախոս Սիրանուշ Խանդանյանը: Գիտաժողովին ուսանողները հանդես են եկան զեկուցումներով: «Անգլերեն լեզու եւ գրականություն» բաժնի բակալավորիատի 2-րդ կուրսի ուսանողուհի Սոֆի Մինասյանը ներկայացրել է «Հայր Հրանտ Մաթևոսյանի «Մեծամոր» էսսեում» թեման, նույն բաժնի 2-րդ կուրսի ուսանողուհի Սոնա Հովսեփյանը՝ «Դեռահասի հոգեբանությունը Հրանտ Մաթևոսյանի Մեր վազը» պատմվածքում» թեման, «Պատմություն» բաժնի մագիստրատուրայի 2-րդ կուրսի ուսանողուհի Նարինե Ժամհարյանը՝ «Քրիստոնեական արժեհամակարգը որպես հայրենասիրության եւ բարոյականության դաստիարակման միջոց» թեման:

Եղել են նաեւ այլ թեմաներով զեկուցումներ՝ նվիրված Արցախյան պատերազմից ներքին առանձնահատկություններին, ուսուցման ժամանակակից մեթոդներին: Զեկուցումներն ուղեկցվել են հետաքրքիր եւ ուսուցողական քննարկումներով: Գիտաժողովի ավարտին մասնակիցները ստացել են հավաստագրեր:

Խոսքով խղաքյան

«ԱՐՏԻՍՏԸ» ՊԱՏՄՎԱԾՔԸ (ԽՈՂՏԱԳՐՈՒԹՅՈՒՆ)



Շիրվանզադեն հայ գրականության խոշորագույն ներկայացուցիչ է: Նա պատկերել է իր ժամանակն ու մարդկանց եւ հայ գրականությունը հարստացրել բազմաթիվ կերպարներով: Շիրվանզադեն գրել է բազմաթիվ

պատմվածքներ. դրանցից նշանավոր է «Արտիստը»: Այն մի լուռ ողբերգություն է՝ թաքնված առօրյայի աղմուկի մեջ: Դա պատմություն է մարդու մասին, որի միակ հարստությունը իր հոգին էր, մի հոգի, ով վառվում է արվեստի կրակով՝ լուսավորելով ուրիշներին, բայց երբեք չտաքացնելով սեփական կյանքը: Արտիստը ոչ թե պարզապես երաժիշտ է, այլ հոգեւոր ճանապարհորդ, որը իր սակավ վաստակով եւ անվերջ նվազով փորձում է պահել արժանապատվությունը մի աշխարհում, որտեղ արվեստը շքեղություն է, իսկ մարդը՝ հաճախ անտեսված սուվեր: Պատմվածքի գլխավոր հերոսը՝ խեղճ, կուրծքը փոքր-ինչ ներս ընկած, գունատ արտիստն էր. մի մարդ է, որ չունի ո'չ տուն, ո'չ ընտանիք, ո'չ բարեկեցիկ վիճակ: Նրա կյանքը նման է հին ջութակի խեղճ ձայնին՝ դողացող, բայց անասելի տաք: Նա շրջում է փողոցներում, սրճարաններում, խաղատների մուտքերի մոտ, նվագում մարդկանց համար, ովքեր հաճախ անցնում ու գնում են՝ չգիտակցելով, որ իրենց կողքով անցնում է մի ողբ հոգեւոր աշխարհ: Արտիստը ապրում է

մեռակ, բայց այդ մեռությունը համբերում է զուսմաթափված հույսով. գուցե մի օր ինչ-որ մեկը կլսի ո'չ թե իր ջութակի ձայնը, այլ իր սրտի մեղեդին: Պատմվածքում կարեւորվում է նաեւ երաժիշտը՝ այն մարդը, որը միակն է, ով մի պահ կանգ է առնում եւ տեսնում արտիստի հոգեւոր մեծությունը: Նա ո'չ թե պարզապես լսում է երաժշտությունը, այլ լսում է մարդու ցավը: Այս փոքրիկ դրվագը ցույց է տալիս, որ անգամ ամենադաժան իրականության մեջ միշտ կա մեկը, ով կարող է ճանաչել, տեսնել արտիստի լույսը, թեկուզ այդ լույսը շատ թույլ է ու խոնարհ: Շիրվանզադեն պատմվածքի ընթացքով մեզ տանում է դեպի անխուսափելի ողբերգություն: Արտիստի մահը դառնում է ո'չ թե միայն մի անտուն մարդու մահ, այլ ամբողջ մի չգնահատված գեղեցկության անկում: Նրա մարմինը բարձրացնում են շքեղ կառքով՝ այն նույն հասարակության մարդիկ, որոնք կենդանության օրոք նրան գրեթե չէին նկատում: Եվ այդ ջրասույզ պահը դառնում է ամենադաժան հակադրությունը. մարդը ողջ կյանքում ապրեց աղքատ ու անտեսված, բայց մահը նրան բերեց մի այնպիսի պատիվ, որին նա արժանի էր կյանքի ընթացքում: Արտիստի մահվան տեսարանն ունի

խորը խորհրդանշան. արվեստը հաճախ գնահատվում է միայն այն ժամանակ, երբ արդեն չի խոսվում: Նրա լուռ, անշունչ մարմինը դառնում է հայելի, որտեղ արտացոլվում է հասարակության անտարբերությունը, նրանց կեղծ բարոյական չափանիշները: Այս պատմվածքը ոչ միայն մարդու ողբերգության մասին է, այլ արվեստի զորության, նարդկային ներաշխարհի նրբության եւ այն ճշմարտության, որ իրական գեղեցկությունը հաճախ ապրում է ամենախոստի մարդկանց մեջ: Արտիստի կերպարը մեզ հիշեցնում է մարդը մեծ է ո'չ թե իր հարստությամբ, այլ իր ոգով: Եվ արվեստը երբեք չի մեռնում. անգամ եթե այն կողող հեռանում է, նրա նվազ մնում է մարդկանց սրտերում՝ որպես մեղեդի, որին, գուցե, կյանքի ընթացքում չենք հասցնում ականջ դնել: Լեւոնին հանել են ջրից նավաստիները, «Խերսոն» շոգեմալի տակից, որ երկու շաբաթից հետո նրան պիտի տաներ Խոսիկա... Այսպես էլ արտիստի վեհ երազանքը, որը պետք է տաներ արվեստի սքանչելի ուղիներով, մնում է անկատար... Գիկա Մուրադյան Կարդենիկի Ռ. Հովհաննիսյանի անվան թիվ 1 հիմնական դպրոցի 8-րդ դասարանի աշակերտ

ՆԱԽԱԳԾՆԻՆ ԱՇԽԱՏԱՆՔՎԱՍԿ ԻՄԱՐԻՈՅԱՆԻ ԿԵՐՊԱՐԻ ԲԱՅՆՀԱՅՏՄԱՆ ՇՈՒՐԶ

Գեղարքունիքի մարզի Մարտունի քաղաքի թիվ 1 հիմնական դպրոցի 8-րդ Ա եւ Բ դասարանների աշակերտները նախագծային աշխատանք են իրականացրել՝ այն նվիրելով հայոց ռազմի պատմության փառավոր հերոսներից մեկին՝ սպարապետ Վասակ Մամիկոնյանին:

Ինչպես տեղեկացրեց Մարտունու թիվ 1 հիմնական դպրոցի տնօրեն Անժելա Պողոսյանը, աշակերտները ներկայացրել են 4-րդ դարում ապրած ու գործած Հայոց մեծ սպարապետ Վասակ Մամիկոնյանի կենսագրությունը, ռազմագիտական կարողությունները եւ Հայաստանի անկախության պահպանման գործում ունեցած կարեւոր դերը:

Նախագծային աշխատանքը իրականացվել է պատմության ուսուցչուհի Անի Շաքարյանի ղեկավարությամբ: Աշխատանքների ընթացքում աշակերտները ծանոթացել են Վասակ Մամիկոնյանի կենսագրությանը, ռազմական եւ պետական գործունեությանը: Աշակերտները մեծ սիրով եւ նվիրումով են աշխատել: Նրանք կազմել են գիրք նվիրված Վասակ Մամիկոնյանի կյանքին եւ գործունեությանը, պատրաստել սահիկաշարեր եւ բուկետներ, որտեղ ներկայացրել են պատմական փաստեր, վկայություններ եւ պատկերներ: Բացի այդ, աշակերտները ստեղծել են նաեւ Վասակ Մամիկոնյանի կիսանդրին, որը յուրօրինակ հարգանքի տուրք է ազգային հերոսին: Նրանց նա-



խաձեռնությամբ գրվել է նաեւ երգ՝ նվիրված Հայոց սպարապետին, որտեղ արտացոլվում են Վասակի բազմազորությունները եւ հայրենասիրական ոգին: Բացի այդ, նրանք կազմակերպել են միջոցառում, որտեղ ներկայացրել են սպարապետի կյանքի եւ գործի ամենակարեւոր դրվագները, ինչպես նաեւ բեմադրել պատմական ներկայացում, որը հանդիսա-

տեսին տեղափոխել է անցյալ դարերի հերոսական Հայաստան: -Նախագծի նպատակն էր՝ ոչ միայն ծանոթացնել աշակերտներին մեր պատմական անցյալին, այլեւ ձեւավորել հպարտություն հայ հերոսների հանդեպ եւ ամրապնդել ազգային ինքնագիտակցությունը: Այս նախագծային աշխատանքը ոչ միայն պատմական գիտելիքների ամրապնդում էր, այլեւ ազգային ինքնագիտակցության, ստեղծագործական մտածողության եւ թիմային աշխատանքի դրսեւորում: Աշակերտների սրտերում Վասակ Մամիկոնյանի կերպարը դարձավ ոչ միայն պատմական հիշողություն, այլեւ հավատքի, ուժի եւ հայրենասիրության կենդանի խորհրդանշան: Սպարապետի ոգին ապրում է յուրաքանչյուրիս մեջ, երբ սիրում ենք մեր հայրենիքը, պաշտպանում նրա լեզուն, մշակույթը եւ արժանապատվությունը: Այդ սիրով ու հավատով է, որ շարունակվում է մեր պատմությունը: Իսկ ամենամեծ արդյունքն այն էր, որ երեխաների մեջ արթնացավ հետաքրքրություն դեպի պատմությունը եւ ազգային հերոսների կերպարները, -ներկայացրեց պատմության ուսուցչուհի Անի Շաքարյանը:

«Գեղամա աշխարհ»